բուսաղէմ՝ ցամաքեցոյց զարիւնս վանականաց և գոսացոյց զոսկերս նոցա։ Հուսկ ուրեմն 'ի միտս եկեալ Յունաց եւ Լատինաց՝ զգաստացան և 'ի բաց թողեալ զիշնամութիւն և զդառադրութիւն՝ միաբանեցան 'ի մի կամս՝ 'ի նոյն կոչեցին և զՀայս, զի դիտէին իսկ թէ անկարելի է գործել ինչ առանց միաբանութեան երից ազգաց, որոյ վասն ժողովեալ 'ի միասին խորհեցան հնարս գտանել՝ թերեւս զերծանիլ կարասցեն 'ի նեղութենէ ասի։ Զի եթէ քարինք և հող երկրին Սաւետաց դառնային յոսկի և յարծաթ որպէս յաւուրս Սողոմոնի, չէր հնար յաղեցուցանել զնոսա։ Զի նոքա իւրաքանչիւր գրեցին գիր աղաչանաց 'ի Դուռն Արքայի և առ ազգայինս իւրեանց 'ի Կոստանդինուպոլիս՝ զի 'ի մի վայր եկեալ ընթերցցին եւ հնարս մարթասցին գտանել վասն հաստատութեան վանօրէիցն Երուսաղէմի, զի սպառնալիք յառաջակայ տարւոյն ստիպէր զնոսա թողուլ լքանել զվանօրայս և փախչիլ 'ի Պաղեստինոյ։ Զէ կարելի ասէ՝ մնալ առ և տպագրիչ լինել պարտամուրհակաց՝ որպէս երբեմն և լինիլ առիթ ապագայ հայհոյանաց. զի տակաւին չէ զերծեալ մեր 'ի ձեռաց պարտատերաց, մանաւանդ դրամ չգտանի 'ի քաղաքիս՝ և մուտք վանացս չէ համապատասխան ելից։

Կուսակալք որք 'ի տարւոջ միանգամ ելանեն շրջիլ 'ի գաւառս, ոչ վասն բարեկարգութեան երկրին, այլ զվանօրայս կեղեքելոյ. զի տեսին զքրիստոնեայ վանականս խածատիչք և գիշատիչք իրեարց, զի նոքա կարծէին թէ՝ փութով չիջանի հրդեհ խռովութեան, այլ այնպիսի վէրս բացին, որ չեն այժմ ձեռնհաս պատել և դարմանել զնա։ Երկիրս ազատ է 'ի հարկատուութենէ, և գիւղօրայք՝ ոմանք Տաճարին, ոմանք Թէքիէի, և այլք Ջրմլին են Վագըֆ։ Եւ տարեկան իշխանի երկրիս սահմանեալ է 25 քսակ, և իւրաքանչիւր վանօրայք տան 2379 դահեկան։ Վասն զի բարձին ասի զերկու ճողաւորն, և զգաւառն արկին ընդ իշխանութեամբ Դամասկոսի, և 'ի գալ նոցա կանխիկ պահանջեն և առնուն եալտրզ ոսկի, և զայն եւս իբրեւ ոչ ինչ և արհամարհեալ յաչս նոցա, տուչորեն զմեզ և գնան, թողեալ առ տեղապահ ինչ 30 ոգւով, զորոց ծախսն տուժեն երեք վանօրայք 30 քսակ արծաթոյ, և ինքն ոչ կարէ տի-